Health Net of California, Inc. և
Health Net Community Solutions (Health Net)

# Համայնքային աջակցություններ

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐ ՎԱՐԵՔ ԱՎԵԼԻ ՈՐԱԿԱՎՈՐ ԿՅԱՆՔ



healthnet.com



# Ներածություն

*Ձեր առողջությունը կարևոր է մեզ համար Health Net-ում: Մենք կարող ենք օգնել, որ խնամքն ստանաք որտեղ և երբ այն ամենից ավելի անհրաժեշտ է Ձեզ: Եկեք օգնենք Ձեզ գտնել ծառայություններ, որոնք կարող են օգնել, որ ապրեք առողջ:*

*Համայնքային աջակցությունները նոր ծառայություններ են, որոնք մատուցվում են տեղական կազմակերպությունների կողմից՝ օգնելու, որ յուրաքանչյուր անձ հասնի իր առողջական ողջ ներուժին: Health Net Medi-Cal-ի անդամներին հասանելի են այս ընտրովի Համայնքային աջակցությունների ծառայությունները: Եթե որակավորվում եք, կան 14 տեսակի ծառայություններ, որոնք կարող են օգնել Ձեր առողջությանը և բարեկեցությանը: Տեսեք, թե ինչ կարող է անհրաժեշտ լինել Ձեզ և ինչի համար կարող եք որակավորվել:*

Համայնքային աջակցությունները Կալիֆոռնիայի առաջընթացային և նորարարական Medi-Cal (California Advancing and Innovating Medi-Cal, CalAIM) ծրագիր է, որը հաստատվել է Առողջական խնամքի ծառայությունների բաժնի (Department of Health Care Services, DHCS) կողմից: Դա մեկն է բազմաթիվ ծրագրերից, որոնք օգնում են բարելավել Medi-Cal-ի անդամների առողջությունը ամբողջ նահանգի տարածքում:

## Ավելին իմանալու կամ Համայնքային աջակցությունների ծառայությունների համար գրանցվելու համար՝

1. Զանգահարեք Health Net **800-675-6110 (TTY՝ 711)** համարով, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր:
2. Զանգահարեք Նահանգի Medi-Cal-ի Առողջական խնամքի ընտրանքներ **800-430-4263 (TTY 800-430-7077)** համարով:
3. Կարող եք նաև Ձեր բժշկին կամ կլինիկային հարցնել ծառայությունների մասին:

# Ծառայություններ՝ ուղղված անօթևաններին և բնակարանային հարցերին

| Համայնքային աջակցությունների ծառայություն | Ինչ կարող եք ստանալ |
|---|---|
| **Բնակարանային անցումային կողմնորոշման ծառայություններ** | **Բնակարան ձեռք բերելու օգնություն:** Սա կարող է ներառել հետևյալ օգնությունները՝<br>• Որոնում ապրելու վայրի կամ բնակարանի համար:<br>• Ինչպես դիմել բնակարանի համար:<br>• Բնակարանային աջակցության ծրագրի մշակում:<br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Ցուցակագրված եք բնակարանային օգնության համար տեղական անօթևանների Համակարգված մուտքի համակարգի կամ նմանատիպ համակարգի միջոցով:<br>• Անօթևան եք:<br>• Ենթակա եք անօթևան դառնալու վտանգի: |
| **Բնակարանի վարձակալման և պահպանման ծառայություններ** | Օգնություն՝ **պահելու Ձեր բնակարանը, այնտեղ փոխադրվելուց հետո:** Սա կարող է ներառել աջակցություն բյուջետավորման, վարձավճարների ժամանակին վճարումների և վարձակալման պայմանագրի իրավունքների և պարտավորությունների ըմբռնման հարցում:<br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Ստանում եք բնակարանային անցման/կողմնորոշման ծառայություններ<br>• Ցուցակագրված եք բնակարանային օգնության համար տեղական անօթևանների Համակարգված մուտքի համակարգի կամ դրա նման համակարգի միջոցով:<br>• Անօթևան եք:<br>• Ենթակա եք անօթևան լինելու վտանգի: |

# Ծառայություններ՝ ուղղված անօթևաններին և բնակարանային հարցերին (շարունակված)

| Համայնքային աջակցությունների ծառայություն | Ինչ կարող եք ստանալ |
|---|---|
| **Բնակարանային ավանդներ** | **Բնակարան ձեռք բերելու օգնություն:** Սա ներառում է՝<br>• Վարձակալման պայմանագիր ստանալու համար երաշխիքային ավանդներ:<br>• Առաջին ամսվա կենցաղսպասարկային ծախսեր:<br>• Առաջին և վերջին ամիսների վարձավճար, եթե պահանջվում է փոխադրվելուց առաջ:<br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Ստանում եք բնակարանային անցման/կողմնորոշման ծառայություններ:<br>• Ցուցակագրված եք բնակարանային օգնության համար տեղական անօթևանների Համակարգված մուտքի համակարգի կամ դրա նման համակարգի միջոցով:<br>• Անօթևան եք: |

# Վերականգնողական ծառայություններ

| Համայնքային աջակցությունների ծառայություն | Ինչ կարող եք ստանալ |
|---|---|
| **Վերականգնողական խնամք (բժշկական հանգիստ)** | **Կարճաժամկետ բնակարանային խնամք նրանց համար, ովքեր այլևս կարիք չունեն հիվանդանոցում գտնվելու, բայց դեռ կարիք ունեն ապաքինվելու** վնասվածքից կամ հիվանդությունից:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Հիվանդանոցում գտնվելու անհրաժեշտության վտանգի տակ եք, կամ պարզապես հիվանդանոցից դուրս եք:<br>• Ապրում եք մենակ՝ առանց պաշտոնական աջակցության:<br>• Գտնվում եք բնակարան չունենալու հեռանկարի դիմաց: Կամ ունեք բնակարան, որը առանց բարելավումների կարող է վնասել Ձեր առողջության: |
| **Հանգստի ծառայություններ** | **Կարճաժամկետ օգնություն՝ տրված խնամողներին այն անձանց, ովքեր կարիք ունեն խնամքի** կամ աջակցության՝ կարճաժամկետ հիմունքով:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Ապրում եք այնպիսի վայրում, որը սահմանափակում է Ձեր առօրյա գործունեությունը:<br>• Ձեր աջակցության մեծ մասը տրամադրելու համար կարիք ունեք խնամողի:<br>• Խնամողի օգնության կարիք ունեք՝ ծերանոցում կամ նման վայրում տեղադրվելուց խուսափելու համար: |
| **Հետհիվանդանոցային բուժման կարճաժամկետ բնակարան** | **Մի վայր, որտեղ կարող եք շարունակել խնամք ստանալ** հոգեկան կամ թմրանյութերի օգտագործման խանգարման կարիքների համար, հիվանդանոցից դուրս գալուց անմիջապես հետո:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Թողնում եք բուժիչ խնամքը:<br>• Հեռանում եք ստացիոնար հիվանդանոցից:<br>• Համապատասխանում եք անօթևանների մասին Բնակարանաշինության և քաղաքաշինության բաժնի (HUD) սահմանման: |

# Վերականգնողական ծառայություններ (շարունակված)

| Համայնքային աջակցությունների ծառայություն | Ինչ կարող եք ստանալ |
|---|---|
| **Սթափեցնող կենտրոններ** | **Մի վայր, որտեղ կարող եք օգնություն ստանալ ալկոհոլի կամ խմելու հետ կապված խնդիրների համար,** փոխանակ արտակարգ իրավիճակների բաժին կամ բանտ տարվելու։<br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• 18 և ավելի տարեկան և հարբած եք։<br>• Տարվել եք արտակարգ իրավիճակների բաժին կամ բանտ։<br>• Ուղարկվել եք արտակարգ իրավիճակների բաժին և հարմար թեկնածու եք Սթափեցնող կենտրոնի համար։ |

# Ծառայություններ երկարաժամկետ բարեկեցության համար՝ տան նման դրվածքներում

| Համայնքային աջակցությունների ծառայություն | Ինչ կարող եք ստանալ |
|---|---|
| **Հեղձուկի (ասթմա) դարմանում** | **Փոփոխություններ** տան մեջ՝ ձերբազատվելու հեղձուկի վնասակար խթանիչներից:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել եք վատ վերահսկվող հեղձուկ, ինչպես սահմանված է՝<br>– Արտակարգ իրավիճակների բաժին այցով:<br>– Հիվանդանոց ընդունվելով:<br>– Երկու որպես հիվանդ կամ շտապ օգնություն այցով:<br>• Հեղձուկի կառավարման ստուգման 19 կամ ավելի ցածր միավորով: |
| **Սովորությունների վարժեցման ցերեկային ծրագրեր** | **Ծրագրեր, որոնք տրվում են, որպեսզի օգնեն Ձեզ սովորել տան նման դրվածքներում ապրելու համար անհրաժեշտ հմտությունները:** Դրանք կարող են ներառել վարժեցում՝ հանրային փոխադրամիջոցներից օգտվելու կամ կերակուր պատրաստելու վերաբերյալ:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Անօթևան եք:<br>• Այլևս անօթևան չեք և վերջին 24 ամիսների ընթացքում մուտք եք գործել բնակարան:<br>• Ենթակա եք անօթևան լինելու վտանգի: Կամ՝ տան նման դրվածքը կարող է բարելավվել: |
| **Շրջակա միջավայրի մատչելիության հարմարեցում (Environmental Accessibility Adaptation) (Տնային փոփոխություններ)** | **Տնային փոփոխություններ Ձեր առողջության և անվտանգության համար: Նաև փոփոխություններ, որոնք** թույլ են տալիս, որ ազատորեն գործեք տանը: Սրանք կարող են ներառել թեքահարթակներ և կառչաձողեր:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Ենթակա եք ծերանոցում տեղադրվելու վտանգի: |

# Ծառայություններ երկարաժամկետ բարեկեցության համար՝ տան նման դրվածքներում (շարունակված)

| Համայնքային աջակցությունների ծառայություն | Ինչ կարող եք ստանալ |
|---|---|
| **Ճաշեր/Բժշկականորեն հարմարեցված ճաշեր/Բժշկականորեն աջակից ուտելիքներ** | **Ձեր տուն առաքվող ճաշեր, որոնք պատրաստվել և եփվել են ըստ Ձեր առողջական և սննդակարգի կարիքների:** Սա ներառում է ճաշեր, որոնք անհրաժեշտ են Ձեր հիվանդանոցից դուրս գրվելուց հետո:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Ունեք քրոնիկ վիճակներ:<br>• Դուրս եք գրվել հիվանդանոցից կամ հմուտ բուժքույրական հաստատությունից:<br>• Ենթակա եք հիվանդանոց ընդունվելու կամ ծերանոցում տեղադրվելու բարձր վտանգի:<br>• Ունեք խնամքի կառավարման գլխավոր կարիքներ:<br>• Ձեզ գնահատել է գրանցված Սննդագետը կամ արտոնագրված Սնուցման մասնագետը: |

# Ծառայություններ երկարաժամկետ բարեկեցության համար՝ տան նման դրվածքներում (շարունակված)

| Համայնքային աջակցությունների ծառայություն | Ինչ կարող եք ստանալ |
|---|---|
| **Բուժքույրական հաստատության անցում/ Շեղում դեպի աջակցված բնակության հաստատություններ** | **Ծառայություններ, որոնք տրվում են օգնելու համար, որ ծերանոցից դուրս գաք դեպի համայնքային դրվածքներ , ինչպես՝ աջակցված բնակության հաստատությունը:** Սա նաև կարող է լինել ծառայություններ, որպեսզի կանխեն Ձեզ ծերանոցում տեղադրելը:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Ծերանոցի անցում<br>– 60+ օր ապրել եք ծերանոցում:<br>– Պատրաստ եք ապրել աջակցված բնակության հաստատությունում (տեղ, որը կօգնի Ձեզ Ձեր առօրյա բժշկական կարիքների համար) որպես ծերանոցի տարբերակ:<br>– Կարող եք անվտանգ ապրել աջակցված բնակության հաստատությունում՝ աջակցությամբ:<br>• Ծերանոցից շեղում<br>– Ուզում եք մնալ համայնքում:<br>– Կամենում եք և կարող եք անվտանգ ապրել աջակցված բնակության հաստատությունում՝ աջակցությամբ:<br>– Այժմ ստանում եք ծերանոցային ծառայություններ կամ համապատասխանում եք ծերանոցային ծառայություններ ստանալու ամենացածր չափանիշին: |
| **Համայնքային անցումային ծառայություններ/ Բուժքույրական հաստատություններից անցում դեպի տուն** | **Ծառայություններ, որոնք տրվում են Ձեզ օգնելու համար, եթե տեղափոխվում եք ծերանոցից տնային դրվածք**, որտեղ Դուք պետք է վճարեք ապրուստի ծախսերը:<br><br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Այժմ ստանում եք բժշկականորեն անհրաժեշտ ծերանոցային մակարդակի խնամք:<br>• 60+ օր ապրել եք ծերանոցում և/կամ Բժշկական հանգստի դրվածքում:<br>• Ուզում եք համայնք վերադառնալ:<br>• Կարող եք աջակից ծառայություններով անվտանգ ապրել համայնքում: |

# Ծառայություններ երկարաժամկետ բարեկեցության համար՝ տան նման դրվածքներում (շարունակված)

| Համայնքային աջակցությունների ծառայություն | Ինչ կարող եք ստանալ |
|---|---|
| **Անձնական խնամքի և տնային տնտեսության ծառայություններ**<br> | **Ծառայություններ, որոնք մատուցվում են օգնելու Ձեր ապրելու առօրյա կարիքներին,** ինչպես՝<br>• Լողանալը<br>• Հագնվելը<br>• Տան մաքրությունը<br>• Մթերային գնումները<br>*Թերևս կարողանաք ծառայություններ ստանալ, եթե՝*<br>• Ենթակա եք հիվանդանոց ընդունվելու կամ ծերանոցում տեղադրվելու վտանգի:<br>• Անձ եք, ով կարիք ունի ամենօրյա օգնության և չունի այլ աջակցության համակարգ:<br>• Վավերացվել եք Տնային աջակցության ծառայությունների համար: |

Health Net-ը համապատասխանում է նահանգային և դաշնային քաղաքացիական իրավունքների մասին գործող օրենքներին և խտրականություն չի դնում, չի բացառում մարդկանց կամ այլ կերպ չի վերաբերվում նրանց ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, սեռի (ներառյալ հղիությունը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը), կրոնի, ծագման, էթնիկ խմբի նույնականացման, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ամուսնական կարգավիճակի կամ սեռի հիման վրա:

Health Net-ը՝

- Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրում է անվճար օգնություն և ծառայություններ՝ օգնելու նրանց արդյունավետ շփվել մեզ հետ, ինչպիսիք են՝
  - Որակավորված նշանների լեզվի թարգմանիչներ
  - Գրավոր նյութեր այլ ձևաչափերով (խոշոր տառատեսակով, աուդիո, մատչելի էլեկտրոնային ձևաչափեր և այլ ձևաչափեր)
- Տրամադրում է անվճար լեզվական ծառայություններ այն մարդկանց, ում առաջնային լեզուն անգլերենը չէ, ինչպես օրինակ՝
  - Որակավորված բանավոր թարգմանիչներ
  - Այլ լեզուներով գրավոր նյութեր
  - Եթե ձեզ անհրաժեշտ են այս ծառայությունները, դիմեք Health Net-ի Հաճախորդների կապի կենտրոնին՝ 1-800-675-6110 (TTY՝ 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, տարին 365 օր:

Խնդրանքի դեպքում այս փաստաթուղթը մատչելի կլինի բրեյլով, մեծ տպված, ձայներիզով կամ էլեկտրոնային ձևով: Այս ձևաչափերից մեկով պատճենը ստանալու համար խնդրում ենք զանգահարել կամ գրել՝
Health Net
Post Office Box 9103, Van Nuys, California 91409-9103
Հաճախորդների կապի կենտրոն՝ 1-800-675-6110 (TTY՝ 711)
California-ի հեռախոսականչ 711

Եթե կարծում եք, որ Health Net-ը չի տրամադրել այս ծառայությունները կամ այլ կերպ խտրականություն է դրսևորել ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի կամ սեռի (ներառյալ հղիությունը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը), մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, կրոնի, ծագման, էթնիկ խմբի նույնականացման, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ամուսնական կարգավիճակի կամ սեռի պատճառով, դուք կարող եք բողոք ներկայացնել 1557 Համակարգողին:

Դուք կարող եք բողոք ներկայացնել անձամբ կամ փոստով, ֆաքսով կամ էլփոստով: Եթե բողոք ներկայացնելու համար օգնության կարիք ունեք, մեր **1557 Համակարգողը** հասանելի է ձեզ օգնելու համար:

- Հեռախոսով. Զանգահարեք՝ 855-577-8234 (TTY՝ 711)
- Ֆաքսով. 1-866-388-1769
- Գրավոր. Գրեք նամակ և ուղարկեք հետևյալ հասցեով՝ Health Net 1557 Coordinator, PO Box 31384, Tampa, FL 33631:

Էլեկտրոնային. Ուղարկեք էլփոստ՝ SM_Section1557Coord@centene.com Այս ծանուցումը հասանելի է նաև Health Net-ի կայքում՝ https://www.healthnet.com/content/healthnet/en_us/disclaimers/legal/non-discrimination-notice-medi-cal.html

Կարող եք նաև քաղաքացիական իրավունքների գանգատ ներկայացնել California-ի Առողջական խնամքի ծառայությունների բաժանմունքի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ հեռախոսով, գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով.

- Հեռախոսով. Զանգահարեք՝ 916-440-7370: Եթե չեք խոսում կամ լավ չեք լսում, խնդրում ենք զանգահարել 711:
- Գրավոր. Լրացրեք գանգատի ձևաթուղթը կամ նամակ գրեք և ուղարկեք այն հետևյալ հասցեով՝ Deputy Director, Office of Civil Rights, Department of Health Care Services, Office of Civil Rights, P.O. Box 997413, MS 0009, Sacramento, CA 95899-7413.
  Գանգատի ձևերը հասանելի են հետևյալ հղումով՝
  http://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx
- Էլեկտրոնային. Էլ. նամակ ուղարկեք CivilRights@dhcs.ca.gov հասցեին:

Դուք կարող եք նաև քաղաքացիական իրավունքների բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու բաժանմունքի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ էլեկտրոնային ձևով՝ Քաղաքացիական իրավունքների գրասենյակի գանգատների հարթակի միջոցով՝ https://ocrportal.hhs.gov/ocr/portal/lobby.jsf փոստով կամ հեռախոսով՝

U.S. Department of Health and Human Services

200 Independence Avenue, SW

Room 509F, HHH Building

Washington, D.C. 20201

1-800-368-1019, 1-800-537-7697 (TDD)

Գանգատի ձևերը հասանելի են https://www.hhs.gov/ocr/complaints/index.html հղումով:

**English:** If you, or someone you are helping, need language services, call 1-800-675-6110 (TTY: 711).
Aids and services for people with disabilities, like accessible PDF and large print documents, are also available.
These services are at no cost to you.

**Arabic:** إذا كنت أنت أو أي شخص تقوم بمساعدته، بحاجة إلى الخدمات اللغوية، فاتصل بالرقم 1-800-675-6110 (TTY: 711)
تتوفر أيضاً المساعدات والخدمات للأشخاص ذوي الإعاقة، مثل الملفات المنقولة (PDF) التي يمكن الوصول إليها والمستندات المطبوعة الكبيرة. تتوفر هذه الخدمات بدون تكلفة بالنسبة لك.

**Armenian:** Եթե դուք կամ որևէ մեկը, ում դուք օգնում եք, ունեն լեզվական օգնության կարիք, զանգահարեք 1-800-675-6110 (TTY՝ 711): Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հասանելի են օգնություն և ծառայություններ, ինչպես օրինակ՝ մատչելի PDF և մեծ տպագրությամբ փաստաթղթեր: Այս ծառայությունները ձեզ համար անվճար են:

**Cambodian:** ប្រសិនបើអ្នក ឬនរណាម្នាក់ដែលអ្នកកំពុងជួយ ត្រូវការសេវាផ្នែកភាសា សូមទូរសព្ទទៅលេខ 1-800-675-6110 (TTY: 711)។ ជំនួយ និងសេវាកម្មផ្សេងៗសម្រាប់អ្នកដែលពិការ ដូចជាទម្រង់ PDF សម្រាប់អ្នកពិការ និងឯកសារព្រីនជាអក្សរខ្នាតធំក៏មានផ្តល់ជូនផងដែរ។ សេវាកម្មទាំងនេះត្រូវបានផ្តល់ជូនអ្នកដោយមិនគិតថ្លៃ។

**Chinese:** 如果您或者您正在帮助的人需要语言服务，请致电1-800-675-6110 (TTY: 711)。还可提供面向残障人士的帮助和服务，例如无障碍 PDF 和大字版文档。这些服务免费为您提供。

**Farsi:** اگر شما یا هر فرد دیگری که به او کمک می‌کنید نیاز به خدمات زبانی دارد، با شمارهٔ 1-800-675-6110 (TTY: 711) تماس بگیرید.
کمک‌ها و خدماتی مانند مدارک با چاپ درشت و PDF دسترس‌پذیر نیز برای معلولان قابل عرضه است. این خدمات هزینه‌ای برای شما نخواهد داشت.

**Hindi:** यदि आपको, या जिसकी आप मदद कर रहे हैं उसे, भाषा सेवाएँ चाहिए, तो कॉल करें 1-800-675-6110 (TTY: 711)।
विकलांग लोगों के लिए सहायता और सेवाएं, जैसे सुलभ PDF और बड़े प्रिंट वाले दस्तावेज़, भी उपलब्ध हैं। ये सेवाएँ आपके लिए मुफ़्त उपलब्ध हैं।

**Hmong:** Yog hais tias koj, los sis ib tus neeg twg uas koj tab tom pab nws, xav tau cov kev pab cuam txhais lus, hu rau 1-800-675-6110 (TTY: 711). Tsis tas li ntawd, peb kuj tseem muaj cov khoom siv pab thiab cov kev pab cuam rau cov neeg xiam oob qhab tib si, xws li cov ntaub ntawv PDF uas tuaj yeem nkag cuag tau yooj yim thiab cov ntaub ntawv luam tawm uas pom tus niam ntawv loj. Cov kev pab cuam no yog muaj pab yam tsis xam nqi dab tsi rau koj them li.

**Japanese:** ご自身またはご自身がサポートしている方が言語サービスを必要とする場合は、1-800-675-6110 (TTY: 711)までお問い合わせください。障がいをお持ちの方のために、アクセシブルなPDFや大きな文字で書かれたドキュメントなどの補助・サービスも提供しています。これらのサービスは無料で提供されています。

**Korean:** 귀하 또는 귀하가 도와주고 있는 분이 언어 서비스가 필요하시면 1-800-675-6110 (TTY: 711) 번으로 연락해 주십시오. 장애가 있는 분들에게 보조 자료 및 서비스(예: 액세스 가능한 PDF 및 대형 활자 인쇄본)도 제공됩니다. 이 서비스는 무료로 이용하실 수 있습니다.

**Laotian:** ຖ້າທ່ານ, ຫຼື ບຸກຄົນໃດໜຶ່ງທີ່ທ່ານກໍາລັງຊ່ວຍເຫຼືອ, ຕ້ອງການບໍລິການແປພາສາ, ໂທ 1-800-675-6110 (TTY: 711). ນອກນັ້ນ, ພວກເຮົາຍັງມີອຸປະກອນຊ່ວຍເຫຼືອ ແລະ ການບໍລິການສໍາລັບຄົນພິການອີກດ້ວຍ, ເຊັ່ນ ເອກະສານ PDF ທີ່ສາມາດເຂົ້າເຖິງໄດ້ສະດວກ ແລະ ເອກະສານພິມຂະໜາດໃຫຍ່. ການບໍລິການເຫຼົ່ານີ້ແມ່ນມີໄວ້ຊ່ວຍເຫຼືອທ່ານໂດຍບໍ່ໄດ້ເສຍຄ່າໃດໆ.

**Mien:** Da'faanh Meih, Fai Heuc Meih Haih Tengx, Oix Janx-kaeqv waac gong, Heuc 1-800-675-6110 (TTY: 711). JomcCaux gong Bun Yangh mienh Caux mv fungc, Oix dongh eix PDF Caux Bunh Fiev dimc, Haih yaac kungx nyei. Deix gong Haih buatc Yietc liuz maiv jaax-zinh Bieqc Meih.

**Punjabi:** ਜੇ ਤੁਹਾਨੂੰ, ਜਾਂ ਜਿਸ ਦੀ ਤੁਸੀਂ ਮਦਦ ਕਰ ਰਹੇ ਹੋ, ਨੂੰ ਭਾਸ਼ਾ ਸੇਵਾਵਾਂ ਦੀ ਜ਼ਰੂਰਤ ਹੈ, ਤਾਂ 1-800-675-6110 (TTY: 711) 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ। ਅਪਾਹਜ ਲੋਕਾਂ ਲਈ ਸਹਾਇਤਾ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ, ਜਿਵੇਂ ਕਿ ਪਹੁੰਚਯੋਗ PDF ਅਤੇ ਵੱਡੇ ਪ੍ਰਿੰਟ ਵਾਲੇ ਦਸਤਾਵੇਜ਼, ਵੀ ਉਪਲਬਧ ਹਨ। ਇਹ ਸੇਵਾਵਾਂ ਤੁਹਾਡੇ ਲਈ ਮੁਫ਼ਤ ਹਨ।

**Russian:** Если вам или человеку, которому вы помогаете, необходимы услуги перевода, звоните по телефону 1-800-675-6110 (TTY: 711). Кроме того, мы предоставляем материалы и услуги для людей с ограниченными возможностями, например документы в специальном формате PDF или напечатанные крупным шрифтом. Эти услуги предоставляются бесплатно.

**Spanish:** Si usted o la persona a quien ayuda necesita servicios de idiomas, comuníquese al 1-800-675-6110 (TTY: 711). También hay herramientas y servicios disponibles para personas con discapacidad, como documentos en letra grande y en archivos PDF accesibles. Estos servicios no tienen ningún costo para usted.

**Tagalog**: Kung ikaw o ang taong tinutulungan mo ay kailangan ng mga serbisyo sa wika, tumawag sa 1-800-675-6110 (TTY: 711). Makakakuha rin ng mga tulong at serbisyo para sa mga taong may mga kapansanan, tulad ng naa-access na PDF at mga dokumentong malaking print. Wala kang babayaran para sa mga serbisyong ito.

**Thai:** หากคุณหรือคนที่คุณช่วยเหลือ ต้องการบริการด้านภาษา โทร 1-800-675-6110 (TTY: 711) นอกจากนี้ยังมีความช่วยเหลือและบริการสำหรับผู้ทุพพลภาพ เช่น PDF ที่เข้าถึงได้และเอกสารที่พิมพ์ขนาดใหญ่ บริการเหล่านี้ไม่มีค่าใช้จ่ายสำหรับคุณ

**Ukrainian:** Якщо вам або людині, якій ви допомагаєте, потрібні послуги перекладу, телефонуйте на номер 1 800 675 6110 (TTY: 711). Ми також надаємо матеріали та послуги для людей з обмеженими можливостями, як-от документи в спеціальному форматі PDF або надруковані великим шрифтом. Ці послуги для вас безкоштовні.

**Vietnamese:** Nếu quý vị hoặc ai đó mà quý vị đang giúp đỡ cần dịch vụ ngôn ngữ, hãy gọi 1-800-675-6110 (TTY: 711). Chúng tôi cũng có sẵn các trợ giúp và dịch vụ dành cho người khuyết tật, như tài liệu dạng bản in khổ lớn và PDF có thể tiếp cận được. Quý vị được nhận các dịch vụ này miễn phí.

## Ավելին իմանալու կամ Համայնքային աջակցությունների ծառայությունների համար գրանցվելու համար

- Զանգահարեք Health Net **800-675-6110 (TTY՝ 711)** համարով, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր:
- Զանգահարեք Նահանգի Medi-Cal-ի Առողջական խնամքի ընտրանքներ **800-430-4263 (TTY 800-430-7077)** համարով:

Health Net of California, Inc.-ը և Health Net Community Solutions, Inc.-ը դուստր ձեռնարկություններն են Health Net, LLC.-ի և Centene Corporation-ի: Health Net-ը գրանցված ծառայողական նշանն է Health Net, LLC-ի: Բոլոր իրավունքները վերապահված:

BKT809536MH01w (10/22)